Տ. ԹՈՎՄԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(18 հունիսի, 2023)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Զի տէր է շաբաթու որդին մարդոյ»
(Մատթ. ԺԲ. 8)։

Սիրելինե՛ր,

Այսօր Հոգեգալստյան երրորդ կիրակին է, եւ Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի նշխարների գյուտի կամ հայտնաբերման տոնի Բարեկենդանը։ Եկեղեցին իր զավակներին թելադրում է առաջիկա շաբաթը պահեցողությամբ, հոգեւոր եւ ֆիզիկական պատրաստությամբ հասնել շաբաթ օրվա տոնախմբվելիք հիշատակին։

Քիչ առաջ բարեշնորհ սարկավագն ընթերցեց ավետարանական պատմությունը, որն ընդգրկում է Մատթեոսի Ավետարանի ԺԲ. գլխի 1–8-րդ համարները։ Հովհաննես Մկրտչի գլխատումից հետո Տիրոջ շուրջ օրվա իշխանությունների հետապնդումների օղակը սեղմվում էր։ Հստակ է, որ նույնիսկ շաբաթ օրով, երբ, ըստ հրեական օրենքի, բազմաթիվ սահմանափակումներ կային, փարիսեցիներից ոմանք շրջում էին Հիսուսի եւ Նրա աշակերտների հետեւից, բնականաբար, որպեսզի մեղադրելու եւ դատապարտելու պատճառներ փնտրեին։

Թերեւս Հիսուս եւ Իր աշակերտները քաղաքի շրջակայքում գտնվող արտերում պտույտի էին դուրս եկել, որի ընթացքում հոգնած եւ քաղցած աշակերտներից ոմանք ձեռքը մեկնում եւ քաղում են մի քանի հասկ, շփում են ձեռքի մեջ եւ ուտում։ Այս չի վրիպում փարիսեցիների աչքից եւ մոտենալով Հիսուսին մեղադրական տոնով նկատում են, որ Նրա աշակերտները մի բան են անում, որը շաբաթ օրով անել «օրինավոր» չէ։

Շաբաթը հանգստի օր էր, բայց հանգստից առավել «դադարի» իմաստը ուներ, երբ, իրապես, ըստ Հին կտակարանի օրենքի, պետք չէր անել

մի որեւէ բան, որը կարող էր իբրեւ աշխատանք նկատվել։ Նույնիսկ շաբաթ օրվա կերակուրը պետք էր նախօրոք պատրաստել, որպեսզի որեւէ ձեւով շաբաթը, հանգիստը կամ դադարը չխախտվեր։

Անշուշտ, մեր Տերը քաջ գիտեր, թե ինչ էր անում եւ ինչի համար։

Նա, լսելով փարիսեցիների մեղադրանքը Իր եւ Իր աշակերտների հասցեին, համառոտ, բայց շատ դիպուկ մի քանի պատասխան է տալիս, որոնք, Եկեղեցու մեկնիչ հայրերն անվանում են թագավորական, քահանայական եւ մարգարեական պատասխաններ։

Թագավորականը, երբ Հիսուս հիշում է Տիրոջ օծյալի՝ Դավթի հետ կապված այն դրվագը, երբ վերջինս իր հետ եղած մարդկանց հետ, քաղցած լինելով, արեց մի բան, որ օրինավոր չէր. կերավ Աստծու խորանի՝ միայն քահանաներին վերապահված Առաջավորության հացից։

Քահանայական, երբ Հիսուս հիշում է հրեա հոգեւորականությանը, որոնք շաբաթ օրով թլփատություն եւ այլ ծեսեր էին անում, բայց անպարտ էին։

Մարգարեականը, երբ Տերը հիշատակում է Օսեե մարգարեի խոսքը՝ «ողորմություն եմ կամենում, ոչ թե զոհ» (Օսեե Զ. 6)։

Այս բոլոր պատասխանների ամփոփումն ու բարձրակետը Տիրոջ հայտարարությունն էր՝ «Մարդու Որդին շաբաթ օրուայ տէրն է» (Մատթ. ԺԲ. 8)։

Սիրելինե՛ր,

Մեր՝ քրիստոնյաներիս «շաբաթը» ե՞րբ է։ Քրիստոնյան ունի՞ դադար, հանգիստ եւ սուրբ օր, սուրբ պահ, սուրբ ժամ։

Քրիստոնյան չունի նման մի օր, մի պահ կամ թե մեկ ժամ։ Քրիստոնյայի ողջ կյանքը շաբաթ է եւ դադար ու հանգիստ աշխարհից։ Մեր ողջ կյանքը Հիսուսինն է։ Հիսուս Ինքն է մեր հանգիստը, մեր շաբաթն ու կիրակին եւ մեր ողջ կյանքը։

Երբ մարդ հավիտենական կյանքի խոստում է ստանում Հիսուսից, սրտի, մտքի եւ հոգու դարձ է ապրում եւ որոշում է Իր կյանքը նվիրել Աստծուն՝ իբրեւ կամավոր ընծա։ Այդպես վարվեցին նաեւ Աստծուն հավատարիմ հրեշտակները, որ իրենց ազատությունը դրեցին Արարչի ոտքերի մոտ եւ հավերժապես հաստատվեցին սրբության մեջ։

Առաջին դարում, ինչը կարդում ենք նաեւ Նոր կտակարանի թղթերում, Տիրոջ աշակերտները քրիստոնյաներին «սուրբ» էին անվանում։ Այս սուրբ դարձած մարդիկ՝ քրիստոնյաները, սխալներ չունեին, այսօրվա քրիստոնյաները, Քրիստոսի հետեւորդները սխալներ, մարդկային վրի-

պումներ չունե՞ն։ Իհարկե՝ ունեն։ Բայց ինչ է ասում Տերը սաղմոսներում. «Երանի մարդուն, ում Տերը մեղավոր չի համարում» (Սաղմ. ԼԱ. 2)։

Հիսուս ինչպես այսօր, այնպես էլ 2000 տարի առաջ, ասում է, որ Ինքն է Օրենսդիրը, Ինքն է Դատապարտողը, Ինքն է Ներողն ու Արդարացնողը։

Տարբեր է, երբ մարդը մեղանչում է, այսինքն՝ մեղք է գործում եւ սիրում է այդ վիճակը։ Բոլորովին տարբեր է, երբ քրիստոնյան մեղանչում է, բայց տանջվում է դրա համար։

Շուրջ 300 տարի քրիստոնյաները հալածվում էին Հռոմեական կայսրությունում։ Հեթանոս հռոմեացիները չէին հասկանում, թե ինչու քրիստոնյաները չեն ցանկանում, որ Հիսուսի արձանը տեղադրվեր Հռոմի պանթեոնում։ Չէ՞ որ այստեղ տեղադրված էին բոլոր այն ժողովուրդների ու կրոնների արձանները, կուռքերը, որոնք գոյություն ունեին կայսրության ողջ տարածքում։

Քրիստոնյաները, սակայն, չէին կարող համակերպվել, հարմարվել օրվա բարքին։ Քրիստոնյան հրաշալի գիտի, որ իր Տերը Միակ Աստվածն է եւ ոչ թե շատ չաստվածներից լոկ մեկը։

Ուրեմն աղոթենք, որ ինչպես մեր կիրակի օրերը լցված են Աստուծով, Նրա փառաբանությամբ եւ բազմաթիվ եղբայրների եւ քույրերի հավատաբույր աղոթակցությամբ, այլեւ մեր բոլոր օրերը լինեն փառաբանություն Աստծուն մեր գործի, խոսքի եւ խոհերի միջոցով. Ամեն։

Տիրոջ շնորհը, սերն ու խաղաղությունը թող լինեն մեր ժողովրդի, մեր Արցախ եւ Հայաստան աշխարհի եւ բոլորի հետ. ամեն։